

ԲՈՎԱՆԻԿԱԿՈՒԹԻՒՆ

S O M M A I R E

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Հ. ՆԵՐՏԵՍ ՄԻ. —
Հայ գիտական Մշակույթը. 97-100

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Կ. Յ. ԲԱՍՄԱԺԻԱՆ. — Արտաբաճա-
կան բառերի հայ բժշկարաններու հա-
մաձայն. 101-106
ԹԱՎԱՍԱՍ ԱՆՈՆԵԱՆ. — Եղբւյն և Ու-
կեբերան. 107-108

ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Հ. ԽՈՐԷՆ ՍԻՆԱՆԵԱՆ. — Նոր երկնա-
քարի անկում մը. 109-112

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՊԱՐԹԵՆԻԿ. — Լէոնարտոյ տա վիշի-
կ իր նկարները. 114-118

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Հ. ՍԻՄՈՆ ՆԵՐՏԵԱՆ. — Դարձը (ող-
բերգ.) 119-124

ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Հ. Ա. ՅՈՎՍԵՓԵԱՆ. — ԺԹ. զարու ի-
տալացի նշանաւոր բանաստեղծներ. . 125-131

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Հ. Յ. ՏԵՐՈՅԵԱՆ. — Բնաբանութիւն և
Տարրագիտութիւն. 132-135
Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ. — Պատ-
մութիւն Հռոմայեցւոց. 135-139

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ
Հ. ՆԵՐՏԵՍ ՄԻ. — Մտաւոր աշխա-
տութեան առողջաբանութիւնը. . . 140-143

ARTICLE DE FOND. — P.
NERSÈS, MECH. — La scientifi-
que culture Arménienne. 97-100

PHILOLOGIQUE
G. J. BASMAJIAN. — Des mots
pathologiques selon les phar-
macopées arméniennes. 101-106
THOMAS LÉONIAN. — Elysée et
Chrysostome. 107-108

SCIENTIFIQUE
P. CHOREN SINAN. — Une clu-
te d'une étoile filante. 109-112

BEAUX-ARTS
BARTÉVIGH. — Léonard de
Vinci et ses peintures. 114-118

THÉÂTRAL
P. SIMON ERÉMIAN. — Le re-
tour (*tragédie*). 119-124

LITTÉRAIRE
P. A. HOVSÉPIAN. — Les illus-
tres poètes Ital. du XIX siècle. 125-131

SCOLAIRE
P. J. TIROJAN. — Fisique et
Chimie. 132-135
P. IS. DER-MOVSÉSIAN. — His-
toire Romaine. 135-139

DIVERS
P. NERSÈS, MECH. — L'hygiène
du travail intellectuel. 140-143

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Հեղինակներէն, տպագրողներէն, ընկերակցութիւններէն և գրատուններէն կը խնդրենք, որ
ո՛ր և է գիրք կամ հրատարակութիւն որ կը զրկեն մեզի, և կը փափաքին որ Բազմավէպի մէջ
անոնց մասին ծանուցումներ հրատարակենք, անպատճառ պէտք են անոնք երկու օրինակ բւ-
լալ, և ծրարը հետեւեալ հասցէին ուղղուած.

Rédaction de la revue «Pazmaveh»

St. Lazare

VENISE (Italie)

Երբ հրատարակութիւն մը մեզի զրկուելէն 2 ամիս վերջն ա՛լ անոր մասին թերթիս մէջ
յայտարարութիւն մը չի տեսնուիր, նշան է թէ այդ հրատարակութիւնը խմբագրութեանս ձեռքն
անցած չէ:

ԽՄՐ.

LA DÉFENSE HEROÏQUE DE VAN. — Ասիկա զրկուած է մեզ՝ «Կրօն» խմբագրութեան կողմէն, ուր և հրատարակուած է հետադրբարկան է՝ վանի արդի պատմութիւնը մանրամասնօրէն գիտնալու համար. զանազան օրագիրներէ Եւաքելով թարգմաններ է ֆրանսերէնէ M. G. անոր 104 էջերուն մէջ զետեղելով նաև 12 ազգային պատկերներ. գինն է 1 ֆրանք. գիմելու է առ

Rédaction de la revue «Droschak»

3, Av. Beau-Séjour

(Suisse)

GENÈVE

REVERIES ON STORMY SEAS. — Այսպէս անուանած է տաղանդաւոր հեղինակն և արեւելքի ծնուող խոսքովն, Արմէն Արտոնց, իր «Անրկանք Փոթորկայից ծովերու վրայ» քանաստեղծութեանց՝ ազատ թարգմանութիւնն անգլիերէն լեզուով, կը բովանդակէ ընտիր քերթուածներ, վերաթիղթ արշաւներ զէպի մուսաներու երկիւնքը, Զայն կ'անուանէ նաև «A Stricken Heart's Soliloquy on a Devastated Home».

Այս գիրքը շատ մը գնահատանքներու արժանացած է, որոնցմէ յիշենք մէկ քանին. Հարիւրապետ մը ռազմաճակատէն կը գրէ. «Զեր ինձ զրկած լիբընտը մեծապէս ինքնաաւիպ կը գտնեմ»։ Բարիդան գրադէտ մը կը տողէ. «Արկանքներ կը յիշեցնեն զՀայնէն, որուն վրան աւելցնենք նաև զՊայրէ՝ առանց այս վերջնոյ շնականութեան»։

Ձեռնաղ հատորիկին գինն է 1 լիլինկ. ստանալու համար պէտք է դիմել

Mr. Armene Ardontz

Bridge Terrace

MAIDSTONE

Խաւիտի Spezia քաղաքը հրատարակուող, L' Eroica պարբերական թերթին՝ 1916ի VIII - IX միացեալ պրտիկը՝ նուիրուած է Հայաստանի Մեծաշիր պատկերազարդ կողքին վրայ կը կարդանք «All' Armenia» — Constant Zarian. Tre canti per dire i dolori della Terra e i dolori dei Cieli. Դաի E. Cozzani հրապարակագիրը՝ I Romani d' Oriente (Արեւելքի Հռովմայեցիք) վերնագրին տակ, զգայուն և հմուտից յօդուած մը գետեղած է՝ Հայերուս վրայ. ապա Alessandro Rosso՝ գովաբանած է կոստանդ Զարեան խորհրդապաշտ քանաստեղծին տաղանդը, և ընտիր կերպով թարգմանած է մեր երիտասարդ բարեկամին 70 էջերով երկը։ Տպագրութիւնը ճոխ է, ըն-

տիր թուղթի վրայ, պարունակելով նաև փայտագրական խորհրդաւոր պատկերներ։ Գինն է 5 ֆրանք. գիմել

Via Galileo N. 2

SPEZIA

ESSAI SUR LES NATIONALITÉS. — Պատ. Հայ Ազգային Պատահարակութիւնը զրկած է մեզ՝ գեա նոր լոյս տեսած՝ Հայութեան համար այս թանկագին հատորը, որուն երկրորդ մասը (51-134) կը խօսի մի մասին Հայոցս վրայ, Մեծ հեղինակը J. de Morgan, բարձր և գիտնական անձնաւորութիւն մ'է, սա մօտէն ուսումնասիրած է Արեւելքի և Արեւմուտքի ընկճուած ազգերու կացութիւնն և արժանիքը։ Ստուգել ամբողջ երկը կ'արժէ թարգմանել մեր լեզուով՝ ի խրախոյս և ի միութարութիւն Հայորդւոց. թարգմանելու օտար լեզուներով՝ ծաւալելու համար ֆրանսացի Պր. Մորկանի արգարակորով զաղափարները՝ ազատամիտ ազգերու ամէն խաւերուն մէջ։

Ախտս որ ներկայ Բազմավէպի պրակն արդէն տպուած էր, երբ պատկառելի գիրքը ձեռքերնս հասաւ. ապա թէ ոչ՝ մենք պիտի փափաքէինք հեղինակին լուսանկարն ունենալով՝ ամփոփ գրութեամբ մը հրատարակել մեր թերթին մէջ սոյն երկի մասին, ի նշան գոհունակութեան և երախտագիտութեան, որ այդքան պայծառ ըմբռնումով ի յայտ կը բերէ մեր ցեղին յոյսերը, մեր ցեղին իրականալի իրձերը և մեր վերածնութեան կենսունակ արժանիքը։ Հաստատուած մեր 6 դարերէ վեր անընդհատ բազմաշարար և աշխարհածանօթ մարտիրոսական վիճակին մէջ ևս՝ յառաջդիմական ամէն ձեռնարկներու և հաստատութիւններու հետամուտ ըլլալովն, հեղինակը զողոր քաղաքութիւններով ապացուցած է՝ թէ ինչպէս երկու հազար տարիներէ ի վեր Հայութիւնը քաղաքակրթի դեր կատարած է մարդկութեան հանդէպ. թէ ան բնական յօդակցութիւններ ունի եւրոպական ազգերու հետ, թէ անոր ձկուումը արեւելեան բարբարոսութեան կատարեալ կակապատկեր կը ներկայացնէ, թէ Հայուն հաւատքը և ազգային աւանդութիւններու հաւատարմութիւնը անխախտ մնացած է շատ դարերէ ի վեր՝ որուն համար հայը իրաւամբ կը պարծն մեծ և զօրաւոր ազգի մը մնացորդն ըլլալուն վրայ, և այլն, և այլն։

Գրքին գինն է 3 ֆրանք, ստանալու համար դիմել՝

Berger-Levrault, Libraires-Éditeurs

5-7, Rue des Beaux-Arts

PARIS